խում գտնուելով — ուրեմն աւելի մօտիկ Կաս-պից ծովին եւ Ռուսաստանին — աւելի հնարաւորութիւններ ունէր ռուսաց կառավարութեան հետ յարաբերութիւններ պահպանելու, քան Էջմիածինը:

Երկրորդ՝ Ղարաբաղում եւ Ղարաբաղի վրայ պարսկական ու առհասարակ մահմեդական ճնշումները համեմատաբար աւելի թոյլ էին, քան Հայաստանի միւս մասերում, հետեւաբար նաեւ Էջմիածնում:

Երրորդ՝ Ղարաբաղում հայութիւնն աւելի հոծ էր, միապաղաղ եւ ազատասէր. մելիքները երկար ժամանակ պահպանել էին իրենց կիսանկախ դոյութիւնը եւ շարունակ ձգտում էին քաղաքական անկախութեան:

Չորրորդ՝ Էջմիածնի կաթողիկոսները գտնւում էին կրկնակի ճնշման տակ — պարսից Շահերի եւ Երեւանի սարդարների: Իսկ այս վերջինները Էջմիածնի նկատմամբ շատ աւելի դաժան էին, քան կենդրոնական կառավարութիւնը: Նրանք բազէի աչքերով հետեւում էին կաթողիկոսների բոլոր քայլերին եւ խստօրէն պատժում էին նրանց, եթէ որեւէ կասկածելի կամ անհաճոյ բան էին նկատում:

Մէկ նմոյշ սարդարների դաժանութեան.— 1819 թուի Նոյեմբերին — ուրեմն դեռ 19-րդ դարում — Եփրեմ կաթողիկոսը Էջմիածնից գնում է Երեւան՝ սարդարի Նոր Տարին շնորհաւորելու, բայց կրծքին միամտաբար ունենալով ռուսական Ս. Աննայի շքանշանը իր ժապաւէնով: Սարդարը, ռուսական շքանշանը տեսնելով, զայրոյթից կորցնում է իր հաւասարակշռութիւնը եւ կատաղօրէն բղաւում կաթողիկոսի վրայ. «Եթէ միւս անգամ ինձ մօտ դաս ռուսական այդ շքանշաններով, խմացի՛ր ստուգապէս, որ նրանց ժապաւէններով կը խեղդեմ քեզ»1):

5.

Չնայած այն դժոխային պայմաններին, որոնց մէջ տառապում էր հայ ժողովուրդը, մանաւանդ պարսից բաժնի Հայաստանում, բայց եւ այնպէս 18-րդ դարի երկրորդ կիսում Հայաստանի անկախութեան գաղափարն այնքան ժողովրդականացած էր, որ արձագանգ է գտնում մինչեւ իսկ հեռաւոր Հնդկաստանում:

Էմին Յովսէփեանն է առաջին Հնդկահայը, որ Հայաստանի ազատութեան նշանաւոր գործիչներից մէկն է դառնում եւ Հնդկահայ առաջին քաղաքական դէմքը:

Սակայն նրա ծրագիրը — ինչպէս մինչեւ այժմ մեր տեսածները — միայն պարսկաց Հայաստանին չէր վերաբերում, այլ եւ Տաճկաց, եւ առաջի հերթին՝ Տաճկաց: Ուստի նա անձամբ շրջում է Տաճկահայաստանում եւ արծարծում ազատութեան գաղափարը: Նրա քարոզութիւնը մեծ յաջողութիւն է գտնում եւ նա ունենում է բազմաթիւ համակրողներ տաճկահայերից:

Ըստ Էմինի՝ Հայաստանի ազատութիւնը հնարաւոր է ձեռք բերել միմիայն մէկ ճանապարհով — ապստամբութեան ճանապարհով, իսկ գործողութիւնների կենդրոնը պիտի լինէր Մուշի Ս. Կարապետի վանքը:

Բայց դրա հետ միասին՝ նա որդեգրում է նաեւ Օրիի ճանապարհը, այն է՝ որ եւրոպական պետութիւններից մէկն ու մէկը պիտի անցնի Հայաստանի ապստամբական շարժման գլուխը եւ ղեկավարի գործը:

Նրա կարծիքով՝ միայն Ռուսաստանը կարող է լինել այդ պետութիւնը: Ուստի 1760 թուին անցնում է Պետերբուրգ եւ դիմում Ելիզավետա Պետրովնայի կառավարութեանը:

Սակայն դժբախտաբար, ռուսաց արքունիքում արդէն մոռացուած էին Պետրոս Մեծի ասանդները: Ելիզավետա Պետրովնայի կառավարութիւնը բնաւ ցանկութիւն չունէր արեւելեան քրիստոնեաների – հետեւաբար նաեւ հայերի — հարցով զբաղուելու: Բայց եւ այնպէս Էմինին մի անգամից չմերժեցին, այլ նորից հրապարակ հանեցին իրենց հին քաղաքականութիւնը — յուսադրման ու ձգձգման քաղաքականութիւնը: Գեղեցիկ խոստումներ անելով, Էմինին ուղարկեցին Հայաստան՝ իբր թէ կրկին ու կրկին հաւաստիանալու հայ ժողովրդի տրամադրութիւններին:

Էմինն այստեղ նոր գլխի ընկաւ, որ Ռուսաստանից պիտի վազ անցնել եւ որոնել մէկ ուրիշ պետութիւն, որը համաձայնէր գործի ղեկավարութիւնը ստանձնելու: Ու նա այս ան-

1) Ա. Երիցեան՝ «Կովկասի Հայք», Ա. 1894 թ., Թիֆլիս, եր. 181: